13000

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«28» 10 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0206-21

Ձեռնարկողը՝ «ԷՆ ԷՌ ԷՄ (ՆԵՅՉՐԼ ՌԻՍՈՐՍ ՄԵՆԵՋՄԵՆԹ)» ՓԲԸ
հասցե՝ ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Անդրանիկի փ., 56 շ., բն.10

Գործունեությունը՝ Դասպակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի պաշարների վերագնահատման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Սյունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Հ. Մարտիրոսյան

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0206-21

«28» 10 **2021թ.**

Սյունիքի մարզի Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի պաշարների վերագնահատման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«ԷՆ ԷՌ ԷՄ (ՆԵՅՉՐԼ ՌԻՍՈՐՍ ՄԵՆԵՋՄԵՆԹ)» ՓԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Հայտ/, Ծրագիր
Գործունեությունը՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Սյունիքի մարզ, Սիսիան համայնք

Ներածական մաս: Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 6-րդ մասի, 2)-րդ կետի ա. ենթակետի՝ Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի պաշարների վերագնահատման նպատակով երկրաբանական ուսումնասիրությունը դասակարգվում է որպես «գ» կատեգորիայի գործունեության տեսակ:

«ԷՆ ԷՌ ԷՄ (ՆԵՅՉՐԼ ՌԻՍՈՐՍ ՄԵՆԵՋՄԵՆԹ)» ՓԲ ընկերության /այսուհետ՝ Ընկերություն/ կողմից նախատեսվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների նպատակն է՝

- Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի մասին երկրաբանական տեղեկատվության արժանահավատության գնահատումը,
- հանքավայրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության ձեռք բերումը,
- հանքավայրի Կենտրոնական տեղամասը բացահանքով շահագործելու պարագայում դրա սահմաններում հնարավոր ընդգրկվող Հարավային տեղամասի լրաուսումնասիրություն՝ C_2 կարգի պաշարների հաշվարկն ապահովող մանրակրկտությամբ,
- հանքավայրի երկրաբանատնտեսագիտական վերագնահատում՝ կոնդիցիաների պարամետրերի հիմնավորմամբ և պաշարների հաշվարկմամբ,
- հանքավայրի կոնդիցիաների պարամետրերի և պաշարների հաստատում՝ լիազոր մարմնի կողմից:

Նկարագրական մաս. Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրը տեղակայված է Զանգեզուրի լեռնաշղթայի հարավ-արևելյան ճյուղավորման՝ Բարգուշատի լեռնաշղթայի հյուսիսային լանջին, ծովի մակերևույթից 2050-2500մ բարձրության վրա: Գեոմորֆոլոգիական տեսակետից շրջանը բարձր լեռնային գոտի է՝ խիստ կտրտված ռելիեֆով, կխորը կիրճերով և գետերով: Մետաղագոյացման առումով Դաստակերտի հանքային դաշտը հարում է Սիսիանի հանքային շրջանի՝ Դաստակերտ-Լեռնաշենի հանքային դաշտի արևմտյան հատվածին: Ջրաերկրաբանական տեսանկյունից հանքավայրը կարելի է վերագրել թույլ ջրակալվածների խմբին: Անձրևաջրերը հիմնականում առաջացնում են մակերևութային հոսքեր:

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում ՀՀ Սյունիքի մարզի Դաստակերտ քաղաքի հարավային մասում, քաղաքից 3 կմ դեպի հարավ ուղղությամբ և

զբաղեցնում է 50.0 հա մակերեսով տարածք: Տարածքն իր եզրագծերով ներառում է Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի Կենտրոնական և Հարավային տեղամասերը և համադրվում է ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Լոր գյուղում գտնվող պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտավայրի և այլ հողատեսքի հետ, ինչպես նաև ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Դաստակերտ քաղաքի հողամասերի հետ: Տարածքում բացակայում են անտառները, տեղ-տեղ արտահայտված է թփուտային, ժայռային և քարացրոնային բուսականությունը: Ուսումնասիրվող տարածքում, կամ մոտակայքում բացակայում են հնագիտական հուշարձանների վերգետնյա շերտերը կամ բնության հատուկ պահպանվող տարածքները: «Զանգեզուր» պետական արգելավայրը ուսումնասիրության տարածքից գտնվում է 3 կմ հեռավորության վրա:

Ընկերության կողմից հայցվող տեղամասի ծայրակետային կոորդինատները ARM WGS-84 համակարգով ներկայացվում են.

1.X=4358594, Y= 8588154
2. X=4358588, Y=8588858
3. X=4358131, Y=8588858
4. X=4358134, Y=8588519
5. X=4357832, Y=8588519
6. X=4357832, Y=8587895
7. X=4358094, Y= 8587895
8. X=4358094, Y=8588194:

Ընկերության կողմից ուսումնասիրության համար հայցվող տարածքում նախատեսվում է իրականացնել.

- հանքավայրի Կենտրոնական տեղամասում վերանմուշարկման աշխատանքներ,
- նոր վերցված նմուշների քիմիական անալիզներ,
- անալիզների արդյունքների համադրում համապատասխան միջակայքերը բնութագրող, նախկինում ստացված նույնանուն տվյալների հետ:

Հորատանցքերի քանակը կազմելու է 13, որից 7-ը կրկնորդ հորատանցքեր են, իսկ 6-ը նոր հորատանցքեր՝ Հարավային տեղամասի 3 հետախուզագծերի վրա: Վերանմուշարկման նպատակով հորատանցքերը հորատվելու են 2006-2012 թթ. վերագնահատման ժամանակ հորատված՝ RC-3, RC-4, RC-5, RC-6, RC-7, RC-8, RC-9 հորատանցքերի հարևանությամբ, որոնցում ապահովվել է հանուկի առնվազն 95% ելք: Նշված հորատանցքերը բնութագրվում են հետևյալ տվյալներով.

Հորատանցքի համարը		Կոորդինատները			Հորատանցքի խորությունը, մ		Ծանոթություն
հին	կրկնորդ	X	Y	Z	հին	կրկնորդ	
1	2	3	4	5	6	7	8
RC-3	RC-3´	8588668	4358246	2199.8	120.0	130.8	Կրկնորդը հորատվելու է մինչև մոտակա բովանցքային հորիզոնը՝ 2069մ
RC-4	RC-4´	8588719	4358241	2223.2	147.7	154.2	
RC-5	RC-5´	8588566	4358259	2189.3	100.3	120.3	
RC-6	RC-6´	8588615	4358265	2186.6	119.4	117.6	
RC-7	RC-7´	8588667	4358292	2216.1	108.0	86.1	Կրկնորդը հորատվելու է մինչև մոտակա բովանցքային հորիզոնը՝2130մ
RC-8	RC-8´	8588763	4358224	2241.8	120.0	111.8	
RC-9	RC-9´	8588767	4358275	2256.1	140.0	126.1	
Ընդամենը					855.4	846.9	-

Հորատանցքերի վերջնական տեղադիրքերը կորոշվեն երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների մեկնարկից հետո:

Կրկնորդ հորատանցքերի տեղադիրքերն ընտրվել են ստորգետնյա հետախուզական և շահագործական փորվածքների տիրույթում՝ ռելիեֆի փոփոխված (նստած) գոտուց դուրս: Նախատեսվում է քիմիական անալիզների ենթարկել շուրջ 400 շարքային նմուշ: Ուսումնասիրության աշխատանքների ընթացքում պայթեցումներ չեն նախատեսվում:

- Ստորգետնյա հետախուզափորվածքներով բացված հանքամարմինների առանձին միջակայքերում վերանմուշարկման աշխատանքներ չեն իրականացվելու, քանի որ նախկինում արված հետախուզափորվածքները չեն պահպանվել:

Դաստակերտի հանքավայրի պաշարների վերագնահատման համար անհրաժեշտ է իրականացնել նաև հանքավայրի շահագործման լեռնաերկրաբանական, լեռնատեխնիկական և հիդրոերկրաբանական պայմանների, ինչպես նաև հանքաքարի տեխնոլոգիական հատկությունների ժամանակակից մեթոդներով և միջոցներով լրացուցիչ ուսումնասիրություններ, այդ թվում՝

1. Հանքավայրի շահագործման լեռնաերկրաբանական ու լեռնատեխնիկական պայմանների մասով պարզել և ներկայացնել.

- հանքավայրի տարածքի բնութագիրը՝ գեոդինամիկ երևույթների տեսանկյունից,
- հանքավայրի երկրաբանական կառուցվածքին մասնակցող ապարների ֆիզիկա-մեխանիկական ու ֆիզիկատեխնիկական ցուցանիշները,
- կառուցվելիք բացահանքի հանքաստիճանների ու կողերի կայունությունն ապահովող պարամետրերի հիմնավորումները,

2. Հանքավայրի հիդրոերկրաբանական պայմանների մասով պարզել և հիմնավորել.

- հանքավայրի և դրան հարող տարածքներում առկա մակերևութային ջրհոսքերի, ջրամբարների և ջրաղբյուրների, ինչպես նաև ստորգետնյա ջրերի հորիզոնների բնութագրերը,
- դեպի բացահանք հնարավոր ջրհոսքը կանխող և մեղմող, ինչպես նաև բացահանքից ջրհեռացումն ապահովող միջոցառումները,

3. օգտակար հանածոյի տեխնոլոգիական հատկությունների մասով.

- հանքաքարի երեք արդյունաբերական տիպերի (պղնձի, պղինձ-մոլիբդենային և մոլիբդենային) երեքական մեծածավալ (100-150կգ) նմուշներով իրականացնել տեխնոլոգիական հետազոտություններ՝ ֆլոտացիոն խտանյութերի ստացմամբ,
- նշված հետազոտությունների արդյունքներով հանքաքարի յուրաքանչյուր արդյունաբերական տիպի համար բացահայտել հիմնական տեխնոլոգիական ցուցանիշների (համապատասխան խտանյութերի ելքը, օգտակար բաղադրիչների կորզումը, դրանց պարունակությունները խտանյութերում ու հարստացման պոչերում) օգտակար բաղադրիչների պարունակությունները ելակետային հումքում,
- մշակել ու ներկայացնել օգտակար հանածոյի հարստացման սխեման ու տեխնոլոգիական ռեգլամենտը:

Հորատման աշխատանքների արդյունքում դուրս բերված հորատահանուկը դասավորվելու է արկղերի մեջ և անմիջապես տեղափոխվում համապատասխան որակավորում ունեցող և հավատարմագրված՝ «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲ ընկերության լաբորատորիա:

Հանքավայրի Հարավային տեղամասի լրաուսումնասիրության նպատակով նախատեսվում է դրա տարածմանը խաչվող ուղղությամբ, միմյանցից 80-90մ հեռավորությամբ ձևավորել 3 հետախուզագիծ՝ յուրաքանչյուրի վրա հորատելով 180-200մ խորությամբ երկուական սյունակային հորատանցք՝ հասցնելով դրանք նույն վայրում նախկինում անցած ստորին բովանցքային հորիզոնի մակարդակին (2125մ): Նշված վեց հորատանցքերի հանրագումարային երկարությունը կկազմի 1100-1200մ: Հանուկից վերցվելու է 600 շարքային նմուշներ՝ քիմիական անալիզների համար: Վերջիններիս տվյալներով կլրացվի տեղամասի վերաբերյալ նախկինում ձևավորված երկրաբանական տեղեկատվությունը, ապահովելով հաշվարկված պաշարները C_2 կարգին դասակարգելու հնարավորությունը:

Հորատման և նմուշարկման աշխատանքները կազմակերպվելու և իրականացվելու են հանքավայրի Կենտրոնական տեղամասում կատարվելիք աշխատանքների համանման-

նությամբ: Հարավային տեղամասի համար նախատեսված հորատանցքերի տեղադիրքը հստակեցվելու է դրա տարածքի տեղազննմամբ՝ հաշվի առնելով նախկինում անցած ճանապարհների և հորատման հրապարակների առկայությունը:

Հանքավայրի վերագնահատման նյութերը ներառելու են.

- կոնդիցիաների պարամետրերի վերահիմնավորումը՝ համապատասխան տեխնիկատնտեսական հաշվարկներով,
- հանքավայրի Կենտրոնական և Հարավային տեղամասերի պաշարների եզրագծումը՝ վերահիմնավորված կոնդիցիաների պարամետրերով,
- հանքավայրի նշված տեղամասերի պաշարների հաշվարկը,
- հանքավայրի Նոր և Մեգրելի տեղամասերի հեռանկարայնության գնահատականները՝ օբյեկտում պաշարների հավելաճ ապահովելու հնարավորության և նպատակահարմարության տեսանկյունից:

Վերը նկարագրված հորատման աշխատանքների կատարման համար սույն ծրագրով նախատեսվում է նախկինում կառուցված ավտոճանապարհների և հորատահրապարակների վերականգնում՝ բուլդոզեր-փխրեցուցիչով: Աշխատանքներն իրականացվելու են 4-րդ կարգի ապարներում՝ 6 հազ.մ^3 ընդհանուր ծավալով հողային (ապարահեռացման) աշխատանքներով:

Հողային աշխատանքների ծավալը բնութագրվում է հետևյալ ցուցանիշներով և ներառում է.

- վերականգնման ենթակա գրունտային ավտոճանապարհների միջին լայնությունը՝ 5մ, հանրագումարային երկարությունը՝ 3կմ,
- վերականգնման ենթակա հորատման հրապարակների լայնությունը՝ 5մ, երկարությունը՝ 6մ, ընդհանուր քանակը՝ 13,
- հողային աշխատանքների ընթացքում հեռացվող ապարաշերտի միջին հաստությունը՝ 0.4մ:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքերի իրականացման ընթացքում տեխնածին ճնշումներ են դրսևորվելու մթնոլորտի, հողային ծածկույթի, բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև լանդշաֆտային ամբողջականության վրա: Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա բացասական ազդեցությունը և բնապահպանական ռիսկերը հիմնականում պայմանավորված կլինեն հորատման հրապարակների կառուցման աշխատանքներով և կներառեն.

- հորատման հրապարակների տարածքներում հողածածկի և բուսականության (եթե առկա է) մասնակի վնասում՝ դրա կտրման, տեղափոխման և պահեստավորման ընթացքում,
- տեխնիկական միջոցների աշխատանքի ընթացքում փոշու արտանետումների առաջացում,
- հորատման տեխնիկայի և տրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում վառելիքի այրման արգասիքների արտանետումներ,
- տեխնիկայի և ավտոտրանսպորտային միջոցների աշխատանքից առաջացող աղմուկ,
- աշխատանքների իրականացման արդյունքում թափոնների առաջացում:

Փոշու արտանետումների ազդեցությունը նվազագույնի հասցնելու համար աշխատանքների ընթացքում /ճանապարհների վերականգնման ժամանակ/ նախատեսվում է չոր եղանակային պայմաններում աշխատանքների ժամանակ իրականացնել ջրցանում: Հորատման աշխատանքներն իրականացնել թաց եղանակով, ինչի պարագայում կբացառվի փոշու արտանետումները: Շարժիչներից արտանետումները կլինեն թույլատրելի սահմաններում, քանի որ կիրառվելու են ժամանակակից տեխնիկական միջոցներ:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման համար նոր մուտքային ճանապարհների կառուցում չի նախատեսվում, վերականգնվելու են նախկինում գոյություն ունեցող ավտոճանապարհները: Բոլոր հորատանցքերը կրկնորդ հորատանցքեր են, ուստի՝ նոր հորատման հրապարակները հիմնականում տեղաբաշխվելու են նախկին հորատման հրապարակների տարածքում: Հորատահրապարակներով խախտվելիք և հետագա վերականգնման ենթակա տարածքների հանրագումարային մակերեսը չի գերազանցի 400 մ² մակերեսը: Վեց նոր հորատանցքերը տեղադրվելու են Կիշկոշտ գետից առնվազն 100 մ հեռավորության վրա:

Հորատման հրապարակների այն հատվածից, որտեղ առկա է վտանգվող է հողի բերրի շերտ, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պետք է հեռացվի և պահեստավորվի: Հորատման հրապարակներից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հեռացվելու և պահեստավորվելու է հողի բերրի շերտը (նախկին հորատման հրապարակների տարածքների մասով՝ դրանց պատշաճ ռեկուլտիվացված լինելու պայմանով)՝ հետագա վերականգնողական աշխատանքների համար օգտագործելու նպատակով: Հեռացման և պահեստավորման ենթակա հողի բերրի շերտի գումարային ծավալը գնահատվել է 160 խմ:

Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները կանխարգելելու և մեղմելու նպատակով մշակվել են միջոցառումներ.

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով նախատեսվում է՝

- հորատման հրապարակների այն հատվածում, որտեղ առկա է հողի բերրի շերտ, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հեռացնել և պահեստավորել,
- ջրային և հողմնային հողատարումից զերծ պահելու համար պահեստավորված հողաթմբերը ծածկել տեղանքին բնորոշ խոտաբույսերով,
- աշխատանքների ավարտից հետո խախտված տարածքները և հորատման հրապարակներն բերել նախնական տեսքի՝ իրականացնելով ռեկուլտիվացիա/վերականգնում,
- կենցաղային թափոններով աղտոտումը կանխելու նպատակով սննդի ընդունման, հիգիենայի և աշխատակիցների հանգստյան վայրերում նախատեսել աղբի տարողություններ:

Մթնոլորտային օդի պահպանության նպատակով նախատեսված է՝

- փոշու արտանետումների նվազեցման համար իրականացնել տարածքի ջրցանում,
- հորատման տեխնիկայի և փոխադրամիջոցների պարբերաբար տեխնիկական վիճակի ստուգում և կարգաբերում,
- հորատման աշխատանքներն իրականացնել ժամանակակից հորատման հաստոցներով՝ ջրի օգտագործմամբ,
- բացառել բնական ջրհոսքերի հուների փոփոխությունը և դրանց անմիջական հարևանությամբ որևէ հորատման կամ հողային աշխատանքների իրականացումը,
- ապարներով ցամաքուրդային ջրերի աղտոտման ռիսկերը նվազեցնելու նպատակով ապարների ժամանակավոր կույտերի վերին մասերում և առուների երկայնքով կազմակերպել կյուվետներ և շրջանցող ջրհոսքեր,

Համաձայն հայտի տեղեկատվության՝ վերականգնվող ճանապարհների և հորատման հրապարակների տարածքում կարմիր գրքային բույսերը և կենդանիները, կենդանիների միգրացիոն ուղիները բացակայում են: Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում կենսաբազմազանության վրա հնարավոր ազդեցությունները

նվազագույնի հասցնելու նպատակով կարևորվել է ճանապարհներից և հորատման հրապարակներից դուրս փոխադրամիջոցների երթևեկությունը:

Չնայած այն հանգամանքին, որ երկրաբանական ուսումնասիրության համար նախատեսվող տարածքում որևէ պատմության և մշակութային ժառանգության տարրեր չեն հայտնաբերվել, այնուամենայնիվ Ընկերությունը մշակել է միջոցառումներ՝ դրանց պատահաբար հայտնաբերման դեպքում հնարավոր ազդեցության կանխարգելման համար:

Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի երկրաբանական ուսումնասիրությունների ողջ ժամանակահատվածի համար Ընկերության կողմից մշակվել է շրջակա միջավայրի կառավարման և մոնիթորինգի ծրագիր: Ընկերության կողմից, ուսումնասիրության աշխատանքներին զուգընթաց իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների կանխարգելմանն ու մեղմմանն ուղղված մշտադիտարկումներ, որոնք ներառվել են բնապահպանական մշտադիտարկումների պլանում և որպես մշտադիտարկման օբյեկտներ դիտարկվել են՝ մթնոլորտային օդը, հողային ծածկույթը, ջրային ռեսուրսները (Կիշկոշտ գետ), կենսաբանական միջավայրը: Մշտադիտարկումների իրականացման համար տարեկան ծախսերը գնահատվել է 20550 հազ. ՀՀ դրամ:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների արդյունքում խախտված տարածքների վերականգնման/ռեկուլտիվացման ծախսերը գնահատվել են 1977 հազ.դրամ և ներառված են նախահաշվում:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցությունների կանխարգելման, կամ մեղմացման նպատակով նախատեսված միջոցառումները /ներառյալ՝ երևակման տարածքում աշխատանքային միջավայրի անվտանգության ապահովման և հնարավոր արտակարգ իրավիճակների կանխարգելմանն ուղղված միջոցառումները/ ամփոփվել են բնապահպանական կառավարման պլանում:

Եզրափակիչ մաս: Նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտի փորձաքննությունն իրականացվել է <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի պահանջներով: ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, հայտի փորձաքննության փուլում Սիսիան համայնքում իրականացվել է հանրային քննարկում, որին մասնակցել են տեղական ինքնակառավարման մարմինները /Սիսիան համայնքի ղեկավար, Լոր և Դաստակերտ բնակավայրերի վարչական ղեկավարներ/, Սյունիքի մարզպետարանը, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, արտակարգ իրավիճակների, առողջապահության, ԿԳՄՍ նախարարությունները, կադաստր կոմիտեն, որոնց կողմից ներկայացված կարծիքները հաշվի են առնվել փորձաքննության գործընթացում:

Քննարկման ընթացքում նախնական գնահատման հայտը և ծրագրով նախատեսված ախատանքները ներկայացվել են մասնակիցներին: Մասնակիցների կողմից բարձրացվել են հարցեր, կապված՝ հարակից տարածքներում առկա ջրօգտագործման աղբյուրների պահպանության և դրանց անվտանգ օգտագործման հետ կապված: Ընկերության ներկայացուցիչը հավաստեց, որ Ծրագրով նախատեսված 13 հորատանցքերից 7-ի տեղադիրքն արդեն որոշված և ներկայցված է, իսկ 6-ի տեղադիրքերը կնտրվեն նախկինում անցկացված հորատանցքերի հրակից տարածքներում, հաշվի առնելով ջրային ռեսուրսի սանիտարական պահպանման գոտիները:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ երկրաբանական ուսումնասիրության ծրագրով նախատեսված աշխատանքների չեն ունենա բացասական ազդեցություններ շրջակա միջավայրի բաղադրիչների /հող, ջուր, օդ, կենսաբազմազանություն/ վրա, քանի որ դրանք փոքրածավալ են և ոչ զգալի ազդեցությամբ:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐ
"ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER" CLOSED JOINT STOCK COMPANY
02543163
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Հայտում ներկայացված բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի գործողությունների իրականացման արդյունքում, հանքավայրի շահագործման ընթացքում աղտոտվածությունը օդային և ջրային ավազանների, հողային ռեսուրսների ինչպես նաև կենսաբազմազանության վրա կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

1.Աշխատանքներն իրականացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ ջրային օրենսգրքի 99-րդ հոդվածի և ՀՀ Կառավարության 20 հունվարի 2005 թվականի թիվ 64-Ն «Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին» որոշման պահանջները:

2.Հողի բերրի շերտի հեռացման և պահպանման հետ կապված միջոցառումներն իրականացվելու են ՀՀ Կառավարության 02.11.2017 թվականի թիվ 1404-Ն և 08.09.2011 թվականի թիվ 1396-Ն որոշումների պահանջներին համապատասխան:

3.Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 22 փետրվարի 2018թ. N 191–Ն որոշման պահանջներով՝ իրականացնելով նախնական գնահատման հայտով ամրագրված շրջակա միջավայրի բաղադրիչների /հողային ծածկույթ, մթնոլորտային օդ, մակերևութային և ստորերկրյա ջրեր, բուսական ծածկույթ և կենդանական աշխարհ/ մշտադիտարկումներ և արդյունքների եռամսյակային հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:

4.Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը և դրանց ժամանակացույցերը:

5.Աշխատանքներն իրականացնելիս պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

6.Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԷՆ ԷՌ ԷՄ (ՆԵՅՉՐԼ ՌԻՍՈՐՍ ՄԵՆԵՋՄԵՆԹ)» ՓԲ ընկերության Սյունիքի մարզի Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի պաշարների վերագնահատման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ Հ. Մկրտչյան